



ԳԱՆՏԵԳՅԱՆ ԹԵՄ ԴԻՕԵՏԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՈՒ ԿԱՆԱԴԱ

# ԿԱՆՏԵԳ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԻՉ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԻՐԱԿԼՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH**


BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏՄԵՆՐ

*ԿԻՐԱԿԻ, 20 Յոկտեմբեր 2019*

*133*

*DIMANCHE, 20 Octobre 2019*



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Զ Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին  
ՏՕՆ ՍՐԲՈՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԱՑՆ

**6<sup>ÈME</sup> DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX  
FÊTE DES SAINTS EVANGÉLISTES**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ  
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (4.3-18)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (4.14-23)

**Les lectures de la Bible d'aujourd'hui**

GALATES 4.3-18 / LUC 4.14-23

Պատարագիչ եւ քարոզիչ՝  
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՂՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

*Chef de choeur: M. Sarkis Barsemian*

*Organiste: Mme Houry Bedrossian*

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 4.3-18

ՅՆոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: 4Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած դրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, 5որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրուե՞նք ստանանք: 6Եւ քանի որ դուք որդիներ էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Յոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: 7Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՛ որդի. ու եթէ որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Զրիստոսի միջոցով:

8Ուրեմն այն ատեն երբ չէիք ճանչնար Աստուած, կը ծառայէիք անոնց՝ որ բնութեամբ աստուածներ չէին: 9Սակայն հիմա որ ճանչցաք Աստուած, կամ մանաւանդ՝ ճանչցուեցաք Աստուծմէ, ի՞նչպէս կը վերադառնաք այն տկար եւ աղքատ սկզբունքներուն, որոնց դարձեալ կ'ուզէք ստրուկ ըլլալ: 10Կը պահէք օրերը, ամիսները, ժամանակներն ու տարիները. 11կը վախնամ ձեզի համար, որ գուցէ զուր տեղը աշխատած ըլլամ ձեր վրայ:

12Եղբայրներ, կ'աղերսեմ ձեզի, ինծի՛ պէս եղէք, որովհետեւ ես ալ ձեզի պէս եղայ. դուք բնա՛ւ վնասած չէք ինծի: 13Դուք գիտէք թէ ի՞նչպէս՝ մարմինիս տկարութեամբ՝ աւետարանեցի ձեզի առաջին անգամ. 14բայց մարմինիս վրայ կրած փորձութիւնս չանարգեցիք, ո՛չ ալ պժգացիք. հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս ընդունեցիք զիս, Զրիստոս Յիսուսի պէս: 15Ուստի ո՞ւր է՞ ձեր այդ ատենուան երանութիւնը. քանի որ ես կը վկայեմ ձեզի թէ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքե՛րը պիտի խլէիք եւ զանոնք ինծի տայիք: 16Միթէ ձեր թշնամի՛ն եղայ՝ ձեզի ճշմարտութիւնը խօսելով: 17Անոնք նախանձախնդիր են ձեզի հանդէպ, բայց ո՛չ բարի նպատակով. նոյնիսկ կ'ուզեն մեզ վտարել, որպէսզի նախանձախնդիր ըլլաք իրե՛նց հանդէպ: 18Սակայն լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին հանդէպ՝ ամէ՛ն ատեն, եւ ո՛չ թէ միայն երբ ձեր մէջ ներկայ եմ:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4.14-23

14Յիսուս Յոգիին զօրութեամբ վերադարձաւ Գալիլեա, եւ անոր համբաւը տարածուեցաւ այդ գաւառին ամբողջ շրջակայքը:

15Ինչ կը սորվեցներ անոց ժողովարաններուն մէջ, ու կը փառաւորուէր բոլորէն:

16Երբ եկաւ Նազարէթ, ուր ինչ մեծցած էր, իր սովորութեան համաձայն Շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու կանգնեցաւ որ կարդայ: 17Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը: Երբ բացաւ գիրքը, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր.

18«Տերոջ Յոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղքատներուն աւետարանելու, որպէս զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, 19գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տերոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»: 20Յետոյ գոցեց գիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ: Բոլոր ժողովարանը եղողները իրենց աչքերը սեւեռած էին անոր վրայ: 21Ուստի սկսաւ ըսել անոց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: 22Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին չէ՞»: 23Ինչ ալ ըսաւ անոց. «Իրաւ դուք ինձի պիտի ըսէք սա՛ առածը. “Բժիշկ, դուն քե՛զ բուժէ: Ո՛րչափ բաներ լսեցինք՝ որ Կափառնայումի մէջ կատարուեցան. հո՛ս ալ ըրէ՛ք՝ ընձազաւառիդ մէջ”»:

### Galates 4.3-18

3Nous aussi, lorsque nous étions des enfants, nous étions asservis sous les rudiments du monde. 4Mais quand l'accomplissement du temps est venu, Dieu a envoyé son Fils, né d'une femme, [et] soumis à la Loi. 5Afin qu'il rachetât ceux qui étaient sous la Loi, et que nous reçussions l'adoption des enfants. 6Et parce que vous êtes enfants, Dieu a envoyé l'Esprit de son Fils dans vos cœurs, criant Abba, [c'est-à-dire] Père. 7Maintenant donc tu n'es plus serviteur, mais fils; or si tu es fils, tu es aussi héritier de Dieu par Christ. 8Mais lorsque vous ne connaissiez point Dieu, vous serviez ceux qui de [leur] nature ne sont point Dieux. 9Et maintenant que vous avez connu Dieu, ou plutôt que vous avez été connus de Dieu, comment retournez-vous encore à ces faibles et misérables éléments, auxquels vous voulez encore servir comme auparavant? 10Vous observez les jours, les mois, les temps et les années. 11Je crains pour vous que peut-être je n'aie travaillé en vain parmi vous. 12Soyez comme moi; car je [suis] aussi comme

vous; je vous [en] prie, mes frères; vous ne m'avez fait aucun tort. 13Et vous savez comment je vous ai ci-devant évangélisé dans l'infirmité de la chair. 14Et vous n'avez point méprisé ni rejeté mon épreuve, telle qu'elle était en ma chair; mais vous m'avez reçu comme un Ange de Dieu, et comme Jésus-Christ même. 15Quelle était donc la déclaration [que vous faisiez] de votre bonheur? car je vous rends témoignage que, s'il eût été possible, vous eussiez arraché vos yeux, et vous me les eussiez donnés. 16Suis-je donc devenu votre ennemi, en vous disant la vérité? 17Ils sont jaloux de vous, [mais] ce n'est pas comme il faut; au contraire, ils vous veulent exclure, afin que vous soyez jaloux d'eux. 18Mais il est bon d'être toujours zélé pour le bien, et de ne l'être pas seulement quand je suis présent avec vous.

### Luc 4.14-23

14Et Jésus retourna en Galilée par la vertu de l'Esprit, et sa renommée se répandit par tout le pays d'alentour. 15Car il enseignait dans leurs Synagogues, et était honoré de tous.

16Et il vint à Nazareth, où il avait été nourri, et entra dans la Synagogue le jour du Sabbat, selon sa coutume; puis il se leva pour lire. 17Et on lui donna le Livre du Prophète Esaïe, et quand il eut déployé le Livre, il trouva le passage où il est écrit :

18L'Esprit du Seigneur est sur moi, parce qu'il m'a oint; il m'a envoyé pour évangéliser aux pauvres ; pour guérir ceux qui ont le cœur froissé.

19Pour publier aux captifs la délivrance, et aux aveugles le recouvrement de la vue; pour mettre en liberté ceux qui sont foulés; et pour publier l'an agréable du Seigneur. 20Puis ayant ployé le Livre, et l'ayant rendu au Ministre, il s'assit; et les yeux de tous ceux qui étaient dans la Synagogue étaient arrêtés sur lui. 21Alors il commença à leur dire : aujourd'hui cette Ecriture est accomplie, vous l'entendant. 22Et tous lui rendaient témoignage, et s'étonnaient des paroles [pleines] de grâce qui sortaient de sa bouche; et ils disaient : celui-ci n'est-il pas le Fils de Joseph? 23Et il leur dit : assurément vous me direz ce proverbe : médecin, guéris-



toi toi-même; et fais ici dans ton pays toutes les choses que nous avons ouï dire que tu as faites à Capernaüm.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

**Յանսոն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն :**

**«Ուստի, ծառայ չես, այլ՝ որդի, եւ եթէ որդի ես, ապա եւ՝ ժառանգ Աստուծոյ» (Գաղ. 4:3-7):**

Աքանջելի, իոսսոմալից ու կեանք պարգեւող տողեր, սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, որ Պօղոս Առաքեալը կը գրէ Գաղատացիներուն ուղղուած իր նամակին մէջ: Առաքեալը մեզի Աստուծոյ ժառանգներ ու որդիներ կը կոչէ, քանզի Աստուածորդիի փրկչական զոհագործութեան միջոցով որդեգրութիւն ընդունեցինք եւ կրկին Աստուծոյ զաւակներ կոչուեցանք: Երբ Արարիչ Աստուած ստեղծեց իր սիրելի զաւակին՝ մարդուն, Իր պատկերն ու նմանութիւնը տուաւ անոր եւ անկա այն մեծագոյն առանձնայատկութիւնն է, որուն միջոցաւ կը տարբերուինք մնացեալ բոլոր արարածներէն: Սակայն Աստուծոյ զաւակ ըլլալու երանելի վիճակը կորսնցուցինք դրախտին մէջ՝ մեր նախահօր պատուիրանազանցութեան հետեւանքով: Այն սարսափելի սխալը, իր մահաբեր հետեւան-քով, կործանարար եղաւ ողջ մարդկային ցեղին համար եւ մարդուն գրկեց ամենամեծ շնորհքէն, որ ունէր: Մարդը այլեւս կորսնցուց Աստուծոյ զաւակը ըլլալու մեծագոյն պարգեւը ու մեղքի ստրուկը դարձաւ: Ան բազում դարեր դեգերեց մարդկութեան դառն պատմութեան ոլորաններուն մէջ՝ մերթ մօտենալով իր Արարիչին, մերթ հեռանալով Անկէ, արժանի չըլլալով Անոր «Յայր» կոչելու: Եւ այս ողջ ընթացքը կը սպասէր ներման, ողոր-

մածուցիկ և հրաշքի, որ մարդկությունը կրկին պիտի արժանանար Ամենակարողի բարեհաճութեան եւ յաւիտենական կեանքի ժառանգորդը դառնար: Երկնաւոր Հայրը եւս կը սպասէր: Ան կը սպասէր ժամանակի լրումին, այսինքն այն պահուն, երբ դեռեւս մանկան գիտակցական աստիճանին գտնուող մարդկութիւնը զարգացում ապրէր ու անցնէր դէպի չափահասութիւն, երբ պատրաստ կ'ըլլար դուրս գալու չոր օրէնքի սահմաններէն ու մտնելու Քրիստոսի փրկարար սիրոյ դաշտը:

Սակայն մինչ մեզի պարզեւուած այս մեծագոյն շնորհքին անդրադառնալը, սիրելի՛ հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, կը կամենայի քիչ մը խօսիլ այն օրէնքին մասին, որուն տակ մարդիկ կը գտնուէին մինչ Քրիստոսի մարդեղացումն ու Սուրբ Կոյսէն ծնիլը:

Հրեական միջավայրին մէջ օրէնքի վառ ներկայացուցիչներն էին քահանայապետերը, որոնք տաճարի հոգեւոր բարձր դասը կը կազմէին եւ իրենց այդ աստիճանը ժառանգաբար կը ստանային իրենց հայրերէն: Օրէնքի ներկայացուցիչ կը համարուէին նաեւ դէւտացիները, որոնք տաճարի ակտի ցած դասի սպասաւորներ էին, քան քահանայապետերը: Կային նաեւ օրէնսգետներ, փարիսեցիներ ու սադուկեցիներ, որոնք իրարմէ կը տարբերուէին Մովսէսական օրէնքի մեկնաբանութեամբ ու անոր հետեւելու տարբերութեամբ: Սակայն անոնց կը միաւորէր մէկ տեսակէտ մը. կրօնականութիւնը կամ աստուածայաշտութիւնը անոնց համար կանոններու չոր հանրագումար մըն էր լոկ, ուստի եւ արտաքին բնոյթ կը կրէր միայն: Անոնք շաբաթը երկու անգամ խիստ պահք կը պահէին, տասանորդ կը վճարէին տաճարին, սակայն Աստուծոյ ծառայելու գործընթացին անոնք սրտով ու հոգիով չէին մասնակցէր: Անոնց համար այդ Մովսէսական օրէնքի հիման վրայ մշակուած կանոններու բազմահատորանոց գիրքերն էին միայն, որոնց բովանդակութիւնը իրենք անգիր կը սորվէին, որպէսզի կեանքի իւրաքանչիւր պարագային գիտնան, թէ որ կանոնը պէտք է կիրառել, սակայն իւրաքանչիւր կանոն ալ, իր հերթին, իր բացառութիւններն ունէր: Խիստ ու յստակ տրուած հրահանգներ, որ կը թելադրէր Աստուած: Ահա այս էր կրօնի մասին ունեցած անոնց պատկերացումը, որ Քրիստոս եկաւ լրացնելու: Քրիստոսի աշխարհ գալով մարդկութիւնը իր նախկին կարգավիճակը վերականգնելու եւս մէկ հնարաւորութեան իրաւունք ստացաւ Բարձրեային կողմէ: Այժմ հերթը մերն էր ընտրելու, թէ ով ենք մենք՝

Աստուծոյ որդիներ, թե՛ շարունակելու եւք ստրուկի ու ծառայի վերաբերմունք ցոյց տալը:

Այս դէպքին առնչութեամբ նկատի չունիմ զուտ կրօնական «ծառայ» հասկացողութիւնը, քանի որ ան մինչեւ այժմ կը գործածուի Աստուծոյ սպասաւորներու եւ Ասոր ծառայութիւն բերող մարդոց նկատմամբ եւ ան շատ բարձր արժէք ունի այս պարագային: Այստեղ խօսքը կ'երթայ այն վերաբերմունքին մասին, որ մենք կը ցուցաբերենք առ Աստուած: Եկեղեցւոյ Հայրերը այս վերաբերմունքը կամ ծառայութիւնը երեք տեսակի կը բաժնեն՝ ստրուկի, ծառայի եւ որդիի: Երբ մենք Տիրոջ սուրբ կամքը կատարելու եւ Ասոր ծառայելու որպէս ստրուկներ կը մօտենանք, ապա այդ կ'ընենք վախէն դրդուած: Ինչպէս ստրկատիրական ժամանակներուն ստրուկը իր տիրոջ յանձնարարութիւնը կը կատարէր, քանի որ հակառակ պարագային կը պատժուէր, այնպէս ալ մենք, եթէ Տիրոջը կը ծառայենք միայն պատիժի ու դժոխքի տանջանքներուն չարժանանալու վախէն, ապա ստրուկի հոգեբանութեամբ Աստուծոյ ծառայութիւն կը մատուցանենք: Եթէ կ'աշխատինք հնարաւորինս Աստուծոյ պատուիրանները պահել ու մեր ծառայութիւնը բերել անոր՝ երկրի վրայ կամ երկինքին մէջ վարձքի ակնկալիքով միայն, ապա այս պարագային ալ մեր Երկնաւոր Հօրը կը մօտենանք որպէս ծառաներ: Սակայն Քրիստոս սորվեցուց մեզի Տէրունական աղօթքին մէջ Աստուծոյ «Հայր» կոչելը, եւ Մկրտութեան խորհուրդով ալ Ասոր որդեգիրները դարձանք, ինչ որ կ'ենթադրէ, որ մենք ալ որդիի վերաբերմունք պիտի դրսեւորենք առ Հայրը: Արդ, եկէք միասին քննենք, սիրելի՛ հաւատացեալներ, թէ ի՞նչն է այդ երրորդ, բարձրագոյն կոչումը եւ ինչպէ՛ս կրնանք այդ կիրառել մեր կեանքերէն ներս: Ասոր համար բաւական է միայն նայիլ ծնողք-զաւակ մարդկային յարաբերութիւններուն: Մանաւանդ մեր Հայ աւանդական ընտանիքներուն մէջ շատ ակնառու է այն խորին յարգանքն ու ակնածութիւնը հօր նկատմամբ, որ բնականաբար հիմնուած է որդիական սիրոյ եւ հնազանդութեան վրայ: Հայրը ընտանիքին գլուխն է, խնամատարն ու պաշտպանը: Ան այն առաջին ու մեծ օրինակն է, այն հեղինակութիւնը, որ զաւակները ունին իրենց առջեւ: Եւ առողջ, ճիշդ ընտանիքներուն մէջ զաւակները կը հնազանդին իրենց հօրը, կը հետեւին անոր, որովհետեւ աներկբայօրէն կը վստահին ու կը սիրեն՝ անկեղծ, մաքուր, վախէ ու շահադիտութենէ զերծ սիրով:

Ո՛չ ստրուկին, ո՛չ ալ ծառային չի յուզեր, թէ ինչպէ՛ս կ'ընթանան իրենց Տիրոջ գործերը, անոնց համար կարելորդ չպատժուիլն



ու ժամանակին վարձատրուիլն է: Միայն զաւակն է, ժառանգորդն է, որ կը հետաքրքրուի ու կը մտահոգուի Զօր գործերով, եւ յօժարաբար պատասխանատուութիւն կը վերցնէ իր վրայ՝ թէ՛ Զօր գործերու յառաջխաղացման, եւ թէ՛ անոր՝ իր մասնակցութեան հարցին: Ահա այսպիսին պիտի ըլլայ մեր վերաբերմունքը առ Երկնաւոր Զայրը՝ անսահման վստահութեամբ, անկեղծ սիրով, յարգանքով ու ակնածանքով լեցուն: Չայն սիրելով է, որ պիտի բերենք մեր ծառայութիւնը, հետեւաբար այդ ծառայութիւնն ալ բնական պիտի համարենք, առանց այն հարցադրումներուն, թէ ինչո՞ւ պիտի ծառայեմ կամ ի՞նչ կը ստանամ անոր դիմաց. «Սիրէ քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ ու քու ամբողջ մտքովդ»: Այս է մեծագոյն եւ կարեւորագոյն պատուիրանը: Երկրորդը ասոր նման է. «Սիրէ ընկերոջդ քու անձիդ պէս» (Մատթ. 22:37-39), սորվեցուց Յիսուս Բրիստոս եւ Իր ողջ երկրային ուղին այս պատուիրանին վկայութիւնը եղաւ մեզի համար: Բրիստոս աշխարհին սիրոյ նոր տեսակ մը բերաւ՝ անմնացորդ նուիրում ու զոհողութիւն պահանջող սէր: Այս սերն էր, որ Ամենակալ Աստուծոյ խաչը բարձրացուց եւ Անոր հրաշափառ յարութիւնն ալ ապացոյց եղաւ, որ այդ զոհաբերութիւնը ի զուր չէր: Բրիստոսի փրկչական սերը ազատեց մարդկութեան ծառայի կարգավիճակէն եւ բարձրացուց Աստուծոյ ժառանգներու կարգավիճակին: Բրիստոսի գալէն առաջ մեր Երկնաւոր Զայրը միայն Աստուած էր մարդկային ցեղին համար, իսկ Բրիստոսի շնորհիւ մենք Ամենակալին «Զայր» կոչելու պատիւն ունեցանք: Արդ, ողջ հոգիով զգանք մեզի ընծայուած այս շնորհքին ողջ մեծութիւնը, սիրելիներ: Գիտակցինք, որ Յիսուս Բրիստոսի շնորհիւ՝ մենք Անոր որդիները դարձանք եւ այլեւ ուրիշ կարգավիճակ չենք ունենար: Ինչպէս երեխան կրնայ մոլորուիլ, յանցանք գործել, շեղիլ ծնողներու մատնանշած ուղիէն, բարկացնել զանոնք, սակայն երբեք չդադրիլ անոնց զաւակը ըլլալէ, այնպէս ալ մենք՝ այլեւ Ամենակալի զաւակներն ենք, Ան ալ մեր բազումողորմ Զայրը: Այս ցնծալի անտիսը մեզի կը բերեն Աւետարանները եւ կը կամենամ, որպէսզի անոնց բերած սքանչելի լոյսն ու ջերմութիւնը ձեր հոգիներուն մէջ ունենալով՝ ապրիք որպէս Բազումողորմ, Բարեգութ, Ողորմած, Գթառատ ու Ամենասիրող Զօր համերաշխ զաւակները: Թող ձեր բարութենէն, խոնարհութենէն ու ցուցաբերած սէր ճառագայթող լոյսը ջերմացնէ ձեզի շրջապատողներուն սիրտերը եւ անոնք ալ բերէ դէպի իրենց Սիրող Զայրը:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի շնորհքը, սերը եւ խաղաղութիւնը թող ըլլայ ձեր բոլորին հետ: Ամէն:

Օրհնութեամբ՝  
Տեր Դավիթ քահանայ Մարգարեան

## ST. JOHN CHRYSOSTOM

On Saturday, October 26, the Armenian Church commemorates and remembers St. John Chrysostom (Hovhan Voskeperan), a notable Christian bishop and preacher in Syria and Constantinople. He is famous for his eloquence—Chrysostom means “golden mouth.” The Orthodox Church honors him as a saint and one of the “three holy hierarchs” (along with Basil the Great and Gregory the Theologian). He is also recognized and honored by the Catholic Church and the Church of England.



John converted to Christianity in 368 when he was barely 21 years old. He renounced a large inheritance and promising legal career and went to live in a mountain cave where he studied the Bible. He was later ordained a priest and soon his sermons were attracting huge audiences. He challenged wealthy Christians, whose generosity was confined to donating precious objects for display in churches. “The gift of a chalice may be extravagant in its generosity,” he said, “but a gift to the poor is an expression of love.”

His outspoken criticism was not appreciated by the hierarchy and he was sent into exile at various times. He had a profound influence on the doctrines and theology of the Armenian Church because he spent the final years of his exile in Armenia. Some of his important works have survived only in Armenian manuscripts.



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի  
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպութեամբ՝

**ՏԻԿՆԱՆՅ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ**



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

**ՊԱԶԱՐ**

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ **Տիկին Հենիքա Սօզբէս**

Շաբաթ 26 եւ Կիրակի 27 Հոկտեմբեր 2019  
Ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք  
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յանդիմանմանութեան համար հեռաձայնել  
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 քիլին



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ


CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Adress** : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2



## Ուշադրութիւն

**Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք թէ Տարեկան Տօնավաճառ Պագարի զոյգ օրերուն**

**Շաբաթ 26 եւ Կիրակի 27**

**Հոկտեմբեր 2019-ին**

**Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող**

**Centre Education des Adultes Outremont**

**դպրոցին կայանատեղիին (parking)-ին մէջ:**

**Մանրամասնութիւնները եւ հասցեն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:**

Շնորհակալութիւն

Ծխական Խորհուրդ



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը  
կարիքն ունի ուսուցիչներու դասաւանդելու  
համար գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել  
քարտուղարութեան՝ (514) 279-3066  
կամ տուեալները ուղարկել հետեւեալ  
ե-հասցէին՝ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Շնորհակալութիւն

## Շաբթուայ խորհրդածութիւնը

- «Մարմնական ժուժկալութիւնը մարդուն ֆիզիքա-պէս ուժեղ կը դարձնէ: Եթէ ան նաեւ կը փորձէ հոգեւոր կեանք վարել, կը դառնայ ուժեղ նաեւ հոգեւոր կերպով:

Ս. Պայիսիոս Աթոսացի

- «Եթէ որեւէ պատճառով վիրաւորուած ես մէկու մը կողմէ, համբերէ, եւ այդ վնասը ետ կը դառնայ վիրաւորողին»:

Ս. Ներսէս Սինայեցի

- «Եթէ չես ուզեր աղօթել, անհրաժեշտ է՝ որ դուն քեզի հարկադրես, սուրբ հայրերը կ'ըսեն, որ հարկադրաբար աղօթքը անելի է, քան ինքնակամ աղօթքը: Դուն չես ուզեր, բայց դուն քեզ հարկադրէ, չէ որ երկինքի Արքայութիւնը ուժով կը վերցնեն»:

(Մատթ. 11.12)

Ս. Ամբրոսիոս Օփթինացի





**Մեր երեխաներուն համար  
Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք  
ապագան**

**Սոնթրեալի Աք.Գրիգոր Լուսաւորիչ  
Առաջնորդանիստ եկեղեցին շտապ  
վերանորոգման կարիքն ունի:**

**Ճարտարապետական ուսումնասիրութիւնները  
ի յայտ բերին թէ եկեղեցոյ արտաքին  
շաղախներն ու ենթակառոյցները անմիջական  
վերանորոգման կը կարօտին: Յառաջիկայ հինգ  
տարիներու ընթացքին, գաղութս պետք է  
հաւաքէ բաւական նշանակալի գումար մը: Իսկ  
այս առաջին փուլը կը կարօտի \$ 250,000 ի:  
Շտապ:**

**Եկե՛ք միասնաբար ապահովե՛նք մեր գաղութի  
ապագան:**



# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

## ԱՂՕԹՔ ՃԱՇԷՆ ՎԵՐՋ

Փառք քեզ, Տեր, փառք քեզ,  
 փառքերու թագաւոր, որ մեզի ուրախութեան  
 կերակուր տուիր եւ մեր սիրտը  
 լեցուցիր քու ողորմութեանդ լիութեանն.  
 հիմա ալ լեցուր մեզ քու Սուրբ Հոգիովդ,  
 որպէսզի անշեւդ հաճոյքով կենանք եւ ոչ ամչնալով.  
 որովհետեւ դուն կը հատուցես ամենուն  
 ըստ իրենց գործերուն:  
 Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը  
 եւ պատիւը, այժմ եւ միշտ  
 եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## PRIÈRE APRÈS LE REPAS

Gloire à Toi Seigneur, gloire à Toi,  
 Roi de toutes les gloires, qui nous as donné  
 une nourriture de joie et qui as comblé  
 nos cœurs de ton infinie miséricorde.  
 Emplis-nous maintenant aussi de ton Esprit Saint,  
 afin que nous soyons dignes  
 de paraître devant Toi et non pas honteux,  
 puisque tu viens et récompenses  
 chacun selon ses oeuvres.  
 A toi conviennent la gloire, la seigneurie  
 et l'honneur, maintenant  
 et dans l'éternité de l'éternité. Amen.

## ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵՎԵՂԵՅԻՈՅ

**DON**  
**À L'ÉGLISE**



**DONATION**  
**FOR THE CHURCH**

### BAZAAR:

Mrs. Mariam Arakilyan \$100

### HOKEHANKISD:

**THE LATE ARTHUR SIMONIAN**

Mr. Arshag Simonian \$75.

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019**



Տ. եւ Տիկ. Կարպիս եւ Սիլվա Ֆերահի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ քրոջ՝

**ՆԱՐԴՈՒՀԻ**

**ՖԵՐԱՀ ՍԱՐԱՖԻ**

**(NARTUHI FERAH SARAF)**

**(մահացած Պոլիս)**

Մահուան 40-ին առիթով

(Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիկ. Զուարթ Պըչաքճեանի,

Պր. Ռուբէն Պըչաքճեանի,

Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաժաքեանի եւ  
գաւակներուն,

Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Ազնիւ Պասիլի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ  
մեծ հօր՝

**ԵՐՈՒԱՆԴ ՊԸՉԱՔՃԵԱՆԻ**

**(YERVANT BECHAKEDJIAN)**

Մահուան 8-րդ տարելիցին առիթով



**ՏՕՆԱՅՈՅՑ**  
**ՅԱՌԱՉԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ**  
**ՀՈԿՏԵՄԲԵՐ / OCTOBRE**

22, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Ղունկիանոսի  
Հարիւրապետին որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի,  
Յովսէփեայ Աստուածածաօրն, Յովսէփեայ Արեւաթացոյն,  
բարեկամին Քրիստոսի, Ղազարոս եւ քերցն նորա Մարթայի  
եւ Մարիամո:

**Lundi 22 – Fête du chef de cohorte Lucien qui crut en la crucifixion  
du Christ, de Joseph, le père de Dieu, de Joseph d’Armathie,  
de l’ami du Christ, Lazare et de ses sœurs Marthe et Marie.**

23, Երեքշաբթի - Տօն Սրբոցն Թէոդիիտոնի քահանային,  
Զենոնի Ձինաւորին, Մակարայ, Եղոկսեայ եւ Ռամելայ:  
*Mardi 23 - Fête du St prêtre Théodion, du soldat Zénon,  
de Magar, d’Eudoxe et de Ramelos.*

24, Չորեքշաբթի – Պահք:  
**Mercredi 24 - Jeûne.**

25, Հինգշաբթի - Տօն Սրբոց Խարիթեանցն, վկայիցն Արտեմեայ եւ  
Քրիստափորի, երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիլիկեայ:  
*Jeudi 25 - Fête des Saints Kharithians, des martyrs Ardème et  
Christophire, des deux femmes Caliniga et Agulina.*

26, Ուրբաթ - Պահք:  
*Vendredi 26 - Jeûne.*

26, Շաբաթ – Տօն Սրբոց Երկուտասանից վարդապետացն  
Ռեթեոսի, Դիոնէսիոսի, Սեղբետրոսի, Աթանասի, Կիւրղի  
Երուսաղէմացոյն, Եթեմի Խուրին Ատրույ, Բարսղի  
Կեսարացոյն, Գրիգորի Նիւսացոյն, Գրիգորի Աստուծաբանին,  
Եպիփանոս Կիպրացոյն, Յովհաննոս Ոսկեբերանին եւ Կիւրղի  
Աղեքսանդրացոյն:

**Samedi 26 – Fête des Saints 12 docteurs, Réthéos, Dyonisios, Sylvestre,  
Athanase, Cyrille de Jérusalem, Ephrém Khouri  
le Syriaque, Basile de Césarée, Grégoire de Nysse,  
Grégoire le Théologien, Epiphane de Chypre, Jean Chrysostome et  
Cyrille d’Alexandrie.**



## POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

## ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

### Պահպանե՛նք Մեր Ժառանգությունը – Կերտե՛նք մեր Ապագան

Վերոյիշեալ կարգախօսը Չորեքշաբթի, 16 Հոկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 6-ին, յատուկ յայտագիրով մը, փոխանցեց մեր ծուխի անդամներուն շինարարական աշխատանքներուն եւ դրամարշաւի յառաջացումներուն ընթացքը:

Յայտագրի առաջին հերթին, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Դաւիթ Քնյ. Մարգար եան կատարեց հանդիսութեան բացումը: Որմէ ետք, ներկայացուեցաւ վերանորոգութեան աշխատանքներու առաջին հանգրուանի մանրամասնութիւնները յատուկ տեսահոլովակի մը ցուցադրութեամբ: Տեսահոլովակը կը ցուցադրէր նաեւ՝ Եկեղեցւոյ անցեալի գործունեութիւնները իր պատմական նկարներով, որոնք փաստագրութիւններ էին Եկեղեցւոյ երկարամեայ ծառայութիւն մատուցած եւ անձնուէր անդամներուն, որոնցմէ շատեր թեպէտեւ առ յաւետ բաժնուած են մեզմէ, սակայն անոնց վառ յիշատակը միշտ կենդանի կը մնայ մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ:

Ապա, ներկաները ուղղուեցան «Վաչէ Յովսէփեան» սրահ, ուր նախաձեռնութեամբ՝ Ծխական Խորհուրդին եւ կազմակերպութեամբ՝ Վերանորոգութեան Դրամարշաւի Յանձնախումբին կայացաւ Զօքթէյ-Ընդունելութիւն մը, որուն հրաւիրուած էին քաղաքական դէմքեր, բարերարներ, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Յայտագրին իր բաժինը բերաւ նաեւ՝ Երգչուհի Սաշա Ճիհանեան, որ իր ոգեչունչ ձայնով ողողեց ամբողջ եկեղեցին եւ արժանացաւ ներկաներու ծափողջոյններուն: Յայտագրին մաս կը կազմէր նաեւ՝ Եկեղեցւոյ «Կոմիտաս» Երգչախումբի ղեկավար՝ Սարգիս Պարսեմեան, որ իր իւրայատուկ եւ հիասքանչ ձայնով արժանացաւ ներկաներու գնահատանքին եւս:

Մեր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնենք մեր բոլոր բարերարներուն, նուիրատուներուն եւ հաւատացեալներուն, որոնք իրենց աջակցութիւնն ու նպաստը որարդէն իսկ բերած են, բերին եւ կը շարունակեն բերել վասն Մեր Երեւաններուն–



Պահպանելու Մեր Թանկարժեք Ժառանգությունը եւ Կերտելու Մեր Պայծառ Ապագան:





Օրինութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ  
Առաջնորդ Գերաշնորհ  
Տէր Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի  
Մոնթրեալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը  
Յունուար 2020-ին կը նախատեսէ  
կազմակերպել

## «ԿԱՏԱԿ ԵՐԳ»

խորագրով երեկոյ մը

Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական,  
սիրային եւ կատակերգի ճոխ  
երգացանկ մը,

որ պիտի ներկայացուի

գեղարուեստական բեմադրութեամբ:

- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի  
հայկական աւանդական ուտեստ եւ հայկական զինի:

Յայտագրին մաս կազմել փափաքողները  
մինչեւ 15 Հոկտեմբեր 2019

կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար  
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ [Barsemians@gmail.com](mailto:Barsemians@gmail.com)



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ



Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ

ԱՄԵՆ Հինգշաբթի  
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ

Études bibliques et discussions  
avec le R.P David Margaryan

Chaque Jeudi à 19h00  
à l'église

Կը հրաւիրենք մեր սիրելի  
հաւատացեալները մասնակից ըլլալու  
Աստուածաշնչական Նիւթերուն

Nous invitons nos chers fidèles à participer à ces  
séances d'interprétations bibliques.

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն  
Une collation de café et de thé est servie

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
Ներկայութիւնը

Nous comptons sur votre  
participation massive



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ**  
**ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN**  
**ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՍՆԵՐԳՈՒԹԻՒՆ**



Սիրով կը յայտնենք, թէ  
Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2019-ի  
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան  
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի  
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները  
ներկայ գտնուելու հոգեպարար այս  
արարողութեան:

*Օրհնութեամբ՝*  
*Տ. Դաիթ Քինյ. Մարգարեան*



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Շախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմուսք):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ վարժարանի դասընթացներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկի պարագային՝ ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail)՝

[haykpetrosyan80@gmail.com](mailto:haykpetrosyan80@gmail.com) կամ [alinabezhanyan1@yahoo.com](mailto:alinabezhanyan1@yahoo.com):

**Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝**

**Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098**

